

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՈՆԸ ԵՎ ԽԱՂՈՂՈՐԶՆԵՔԸ

Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է, եւ Տիրամորը նվիրված տոներից ամենահինը: Այն տոնում են օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը: Այս տարի այն նշվեց օգոստոսի 12-ին: Այդ օրը Թբիլիսիի Սուրբ Էջմիածին հայկական եկեղեցում հանդիսավոր պատարագն ու խաղողօրհնեքի արարողությունը կատարեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը: Աստվածածնի վերափոխման եւ խաղողօրհնեքի տոնը մեծ շուքով նշվեց նաեւ Ախալքալաքիի, Լիւնոնիի, Ախալցխայի, Ախալցխայի եւ մյուս հայաշատ բնակավայրերի եւ շրջանների հայկական եկեղեցիներում, մատուցվեցին տոնական պատարագներ, ապա անցկացվեց խաղողօրհնեքի արարողությունը:

Կցկտուր են Աստվածամոր մասին տեղեկությունները Աստվածաշունչ մատյանում, իսկ նրա կյանքի մյուս մանրամասները, ինչպես նաեւ վերափոխման պատմությունը պահպանվել եւ մեզ են փոխանցվել եկեղեցու սրբազան ավանդության շնորհիվ:

Տոնի պատմական հիմքը սրբազան ավանդությունն է, համաձայն որի, Քրիստոսի համբարձվելուց հետո, առաքյալները, ըստ Փրկչի իրամանի, գնացին իրենց վիճակված երկիրը, իսկ սուրբ կույս Մարիամը Հովհաննեսի հետ մնաց Երուսաղեմում: Երանելի կույսն այդ ժամանակ բնակվում էր իր ծնողների տանը, եւ նրան սպասավորում էր Հովհաննես առաքյալը: Տիրոջ համբարձումից հետո սրբուհին աշխարհում մնաց եւս տասներկու տարի եւ նրանով մխթարվում էին առաքյալները:

Շուրջ 12 տարի Աստվածամայրը պահքով հաճախ այցելել է իր սիրասուն Որդու գերեզմանն ու անդադար աղոթել: Այդ այցելությունների մեկի ժամանակ էլ նրան է հայտնվել Գաբրիել իրեշտակապետն ու ավետել Տիրամոր՝ երկրային աշխարհից Վերին Երուսաղեմ վերափոխվելու լուրը:

Աստվածածինն էլ այս բարի լուրը հայտնել է իր ազգականներին ու մյուս բոլոր քրիստոնյաներին՝ պատվիրելով, որ իրեն թաղեն Գեթեմանիի ձորակում: Սուրբ Կույսը նաեւ պատվիրել է Հովհաննես առաքյալին, որ վերջինս Սբ. Պատարագ մատուցի, որպեսզի ինքը վերջին անգամ Սբ. Հաղորդություն ընդունի: Հաղորդվելուց հետո Աստվածամայրը գնացել է Վերնատուն: Մինչ առաքյալները լաց էին լինում, Հովհաննեսը վերջինս է մի տախտակ ու տվել Աստվածածնին եւ խնդրել, որպեսզի նա իր պատկերը դրոշմի դրա վրա: Տիրամայրը վերցրել է տախտակը, խաչակնքել ու երեսին դրել, այնուհետեւ թրջել արցունքներով եւ Աստծուց խնդրել, որ այդ տախտակի միջոցով մարդիկ բժշկվեն իրենց ախտերից եւ գանազան հիվանդություններից: Երբ առաքյալները շրջապատել են Տիրամոր մահիճը, աննկարագրելի մի լույս է երեւացել: Սենյակի վերելուց հայտնվել է Քրիստոս՝ իրեշտակների գործերով: Տեսնելով իր Որդուն՝ Աստվածամայրն երկարաժամ է հոգին:

Սբ. Կույսի երկրային կյանքի վախճանը եկեղեցին մնջում եւ ոչ թե մահ բառով է որակում՝ հասկանալի դարձնելու նրա

երկինք փոխադրված լինելը: Սբ. Բարդուղիմեոս առաքյալը, որ բացակայում էր հուղարկավորությանը, վերադառնալով Երուսաղեմ, ցամաքում է վերջին անգամ տեսնել Աստվածամորը: Առաքյալները նրա խնդրանքով բացում են գերեզմանը, սակայն այնտեղ չի լինում Սբ. Կույսի մարմինը: Այդ նշանակում էր, որ Հիսուս իր խոստման համաձայն երկինք էր փոխադրել իր Սուրբ: Առաքյալներն էլ փայտի վրա դրոշմած պատկերը տալիս են Բարդուղիմեոսին՝ որպես մխթարություն: Ըստ Սբ. Մովսես Խորենացու՝ Հայաստանի առաջին լուսավորիչն այն բերում է Հայաստան եւ գետեղում Անձեւացյաց գավառի Դարբնոց կոչված վայրում, ուր հետագայում՝ ի պատիվ Աստվածամոր եկեղեցի եւ կուսանոց է հիմնադրվում:

Աստվածածնի վերափոխման տոնի օրը, Սբ. Պատարագից հետո կատարվում է խաղողօրհնեք: Օրհնվում է նաեւ տարվա ողջ բերքն ու բարիքը: Հայ եկեղեցին դարեր շարունակ խորին հարգանք ու երկյուղածությամբ է տածում Աստվածամոր հանդեպ՝ շեշտելով Աստծո մայր լինելու հան-



գամանքը, մաքրակենցաղությունը, անօրինակ խոնարհության ոգին, առաքինի վարքն ու նվիրվածությունը: Իսկ հայ կնոջ համար Սբ. Կույսն առաքինի, հավատավոր մոր, ընտանեկան սրբության պահապանի մարմնացումն է:

ՇՆՈՐԱՆԴԵՆ

Ընթերցողի սեղանին է դրված Վահե Անթանեսյանի «Միքայել Արամյանց. կյանքի եւ գործունեության դրվագներ» գիրքը: Ազատ շարադրանքի ոճով հեղինակը ձգտել է ներկայացնել դրվագներ Միքայել Արամյանցի կյանքից ու գործունեությունից: Ցավոք, այնպես է ստացվել, որ մինչեւ այժմ մենք որեւէ հիմնարար եւ ամբողջական ուսումնասիրություն չունենք մեր ժողովրդի արժանավոր գավազներից մեկի՝ մեծ գործարար եւ բարերար Միքայել Արամյանցի մասին:

Այս բացը լրացնելու փորձ է արել Վահե Անթանեսյանը՝ օգտագործելով արխիվային նյութեր, դիմելով ժամանակի կենսագիրներին, մասնավորապես՝ Գրիգոր ավագ քահանա Մանդակունու «Ոսկի բարեկամ հայ ընտանեաց» աշխատությանը: Բազմաթիվ տեղեկություններ քաղված են ժամանակի մամուլից: Սրանք են հիմնական աղբյուրները, մասնավոր, որ այդ ժամանակ ձեւավորված սկզբունք է գործել չբարձրաձայնել, չթմրկահարել բարեգործությունը, այլ հնարավորինս աննկատ մնալ, ասելով, որ բարեգործությունը պետք է միայն բարձրալից հայտնի լինի: Թերեւս այդ պատճառով մինչ այսօր էլ Միքայել Արամյանցի բազմաթիվ բարեգործություններ այդպես էլ անհայտ են մնացել: Բայց հայ մեծ բարեգործների համար դա չէր կարելու, այլ մարդկանց օգնության ձեռք մեկնելը, հասարակության կենսագործության համար կարելու մարմինների բնականոն ընթացքին աջակցելը: Եթե անգամ այս առումով դիտարկենք հեղինակի հավաքած նյութերը, ապա կտեսնենք Միքայել Արամյանցի բարեգործության լայն շրջանակը եւ նրա գործուն, կոնկրետ եւ հասցեական բայերը:

Միքայել Արամյանցի նման մարդանհատականությունը չէր կարող անտարբեր լինել իր համար այնքան սիրելի քաղաքի՝ Թիֆլիսի հիմնախնդիրների նկատմամբ: Նա չէր կարող չհասկանալ, որ ազգային մարմինների բնականոն գործունեության համար ներդրումներ են պետք, եւ դա պետք է անեն հենց իրենք՝ գործարար-բարեգործները,

«ՄԻՔԱՅԵԼ ԱՐԱՄՅԱՆՑ. ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ»


Ինչպես հաղորդել ենք («Վրաստան» 35-36, 11 մայիսի 2013թ.), Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում անցկացվեց Միքայել Արամյանցի ծննդյան 170-ամյակին նվիրված միջոցառում, որին մասնակցեց նաեւ հայ մեծ բարերարի կյանքի ու գործունեությանը նվիրված գրքի հեղինակ Վահե Անթանեսյանը: Գիրքը այսօր արդեն ընթերցողի սեղանին է: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Երիցյանի վերոնշյալ գրքի գրախոսականը:

բարերարները: Ինչպես վկայում են ժամանակակիցները՝ նա երբեք իրեն հեռու չդրեց նաեւ ազգային խնդիրներից ու ցավերից, ընդհակառակը, դրան ծառայեցրեց իր ունեցածը: Այս ամենը հստակ, կարմիր թելի պես անցնում է Վահե Անթանեսյանի կողմից ներկայացվող շարադրանքում: Հեղինակը կարողացել է փնտրել, գտնել տարբեր նյութեր, նամակներ, փաստաթղթեր, որոնք բնութագրում են նաեւ Միքայել Արամյանց մարդուն, ներկայացնում նրա ապրումներն ու հույզերը: Այս առումով հատկապես կարգին են նրա նամակները՝ ուղղված դստերը՝ Աննային եւ փեսային՝ Հովհաննես Ղորղանյանին: Այստեղ վեր է հանում մեծ հայը իր ողջ էությանը՝ մարդասիրությամբ, հոգեկան խռովքով, ծնողական ջերմ վերաբերմունքով, հայրենասիրությամբ: Ի դեպ՝ նա այն մեծահարուստներից ու բարերարներից էր, ով հավատում էր խորհրդային իշխանությանը, սակայն նա հուսախաբ եղած ու խռոված 1922 թվականի դեկտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը հրաժեշտ տվեց այս աշխարհին: Բայց ինչպես հեղինակն է ընդգծում, նա թողեց բարի ամուսն, ամուսնաց մի իր նմանը չունեցող առողջապահական հիմնարկ, որը Վրաստանի մայրաքաղաքում սերնդից սերունդ փոխանցվում է որպես «Արամյանցի հիվանդանոց»:

Գրքում ջերմություն ու անկեղծություն, ուշադրավ դիտարկումներ եւ մտորումներ կան: Տեղ են գտել լուսանկարներ, որոնք ներկայացնում են Միքայել Արամյանցի ընտանիքը եւ մերձավորներին: Այս լուսանկարների մեծ մասը արվել է Թիֆլիսից 80 կմ

նկատմամբ: Այնպես էր ստացվել, որ նրա կյանքի եւ գործունեության հիմնական քաղաքները Թիֆլիսն ու Բաքուն էին դարձել, եւ նա մեծ կարոտ ուներ Հայաստանի նկատմամբ: Դա դրսևորվեց նաեւ Ախալքալաքի կալվածքի ձեռքբերմամբ եւ Հաղբատավանքի կալվածքների՝ Հայ Առաքելական եկեղեցուն վերադարձով: Միքայել Արամյանցը, այս կալվածքներում օգնության ձեռք է մեկնում տեղի բնակչությանը՝ երեխաների համար դպրոցներ կառուցելով, սերմացու, աշխատանքային գործիքներ բաժանելով տարածաշրջանի գյուղերի բնակիչներին: Այդ տարիներին Ախալքալաքում եւ շրջակա վայրերում ապաստան էր տալիս նոր սկսվող եղեռնից արդեն մազապուրծ եղած եւ այդ տարիներին «տաճակահայ փախստականներ»՝ անունն ստացած մարդկանց: Նրանց համար տներ էր կառուցում, անգամ փոքրիկ բնակավայրեր:

Օգտվելով առիթից՝ ուզում են եւս մեկ անգամ ողջունել նման գրքի ծնունդը, ասելով, որ այս գործը պետք է շարունակել: Պետք է ծնվեն գրքեր, ուսումնասիրություններ այն մարդկանց կյանքի եւ գործունեության մասին, ովքեր բարի հետք են թողել մարդասիրության ասպարեզում եւ մինչեւ այժմ էլ սերնդեսերունդ խոսում են այդ մասին: Երբ մենք տեսաֆիլմ էինք նկարահանում Թբիլիսիում, կենտրոնական փողոցներում նաեւ տեսահարցախոսյալ անցկացրինք, թե ի՞նչ գիտեն Միքայել Արամյանցի մասին: Մեր բոլոր ավագ գրուցակիցները հիշում էին նրա բարեգործության մասին, ձգտում ինչ-որ բան մտաբերել նրա կյանքից, անգամ լեգենդներ պատմել: Պետք էր



տեսնել այն ոգեւորությունը, երբ լսում էին մեծ բարերարի մասին: Եվ կարելու չէր, թե ովքեր էին ազգությանը: Թբիլիսիում մեզ տարբեր հետաքրքիր պատմություններ էին ներկայացնում ինչպես Միքայել Արամյանցի եւ Ալեքսանդր Մանթաշյանցի, այնպես էլ մեր մյուս հայ մեծահարուստների մասին: Նրանք ընդգծում էին, որ Թիֆլիսը Թիֆլիս չի լինի, եթե նրանից ոգին չփոխանցվի սերնդեսերունդ: Եվ կուզենային, որ նոր, մատաղ սերունդը ավելի ու ավելի շատ բան իմանար նրանց մասին: Ցավոք, հարցախոսյալի ժամանակ երիտասարդները քիչ էին հիշում մեծ բարերարին: Այս խնդիրը հրատապ է նաեւ մեզ համար՝ մենք պետք է կարողանանք մեր երիտասարդներին փոխանցել տեղեկություններ այդ մարդկանց գործի, նրանց վեհ հոգու, կատարած բարեգործությունների մասին: Դրան հասնելու համար տարբեր ճանապարհներ կան: Թերեւս այդ գործին նպաստած կլինենք, եթե տարեկան մեկ անգամ մշտնապես «Բարերարի օրը» եւ հիշենք իրենց բարի գործերով: Այս ճանապարհին կարելու քայլ է կատարված սփյուռքի նախարարության կողմից, քաղաքամայր Երեւանում ստեղծվել է բարերարների ճեմուղի՝ հայ երեւելի գործարարների կիսահորիզոնով: Նման քայլերն ավելի ու ավելի շատ պետք է լինեն: Անկասկած իրազեկման խնդիր գոյություն ունի: Չպետք է մոռանալ այդ մարդկանց հոբելյանները, ինչը թույլ կտա եւս մեկ անգամ վերադառնալ մեր ակունքներին: Չէ՞ որ մեր անվանի մեծահարուստները եւ բարերարները երբեք չկտրվեցին իրենց ակունքներից: Ընդհակառակը, ձգտեցին միշտ կենսունակ պահել այդ ամենը: Ընդհանրապես, նրանց նվիրված ուսումնասիրությունների պակաս կա:

Առիթն օգտագործենք եւ ոչ միայն ողջունենք գրքի հրատարակությունը, այլ ասենք. «Ծնունդը շնորհավոր, մեծ հայ Միքայել Արամյանց, 170 տարեկան դարձար»: **ՍԵՐԳԻ ԵՐԻՑՅԱՆ**
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՃՁ ԾՕ - à 2 ↑ 2 e É 2 Û * 2 Û È 2 ¼ 2 Û * É à Ծ Ծ à օ Ծ , Û ° Ծ

2 e à Ծ à օ à Ծ Û à Ծ Û

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԱԶԲԵՐԸ

Գարնան վերջից եւ ամառային օրերին աչքերս սկսում են կսկծալ: Ծանոթներս խորհուրդ են տալիս օգտագործել խոնավեցնող կաթիլներ: Ի՞նչ խորհուրդ կտային:



Բարձրագույն

Ընդհանրապես, գարնան վերջին եւ ամառան ամիսներին ակտիվացնում են ալերգիկ ռեակցիաները: Ամառն շրջանում տարածված երեւոյթ է նաեւ «չոր աչքի» ախտահիշը, որը համարվում է քաղաքակրթության հիվանդություն. այն առաջանում է համակարգչի դիմաց եւ օդորակիչների միջավայրում երկար ժամանակ անցկացնելուց: «Չոր աչքի» դեպքում հիվանդներն ունենում են աչքում օտար մարմնի եւ չորության զգացողություն, անհանգստություն: Այդ դեպքում պետք է օգտագործել խոնավեցնող կաթիլներ: Նաեւ խորհուրդ է տրվում ամառն շրջանում էլ հաճախ քրջել աչքերը:

Լուսինե Մանուկյան

Խոնավեւ կոսմետիկ միջոցների չարաշահումից, ինչպես նաեւ հետեւել հիգիենայի կանոններին՝ քնելուց առաջ վիճակ աչքերը: Նաեւ խորհուրդ է տրվում ընտրել ուղտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանիչ շերտ ունեցող, որակյալ ապակիներով ակնոց, որը նախընտրելի է, որ լինի մուգ կանաչ, շակամակագույն կամ սեւ:

Ավանբույժները գտնում են, որ վերջին տարիներին մեծացել է կարճատեսների քիվը, ինչը պայմանավորված է համակարգչի չարաշահումով, ուստի խորհուրդ է տրվում յուրաքանչյուր 20 րոպեն մեկ ընդմիջել համակարգչով աշխատանքը եւ հեռացնել աչքերը համակարգից:

Կանանց խորհուրդ է տրվում ամառն ամիսներին շարժվելիս

ԾՐ 1 2 Ծ Ծ Ծ 2 1 2 Û

ԱԶԳԱՅԻՆ ՈՐ ԱՐԺՈՒՅԹՆ Ե ԶԱՍԱՐԿՈՒՄ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿԸ



Հեղափոխություններ տարվել են, արդյոք տարբեր երկրների թղթադրամների շեւկերպման համեմատության ուղղությանը: Եթե՛ այո, ապա, ի՞ր արժույթն է ճանաչվել ամենագեղեցիկը: ԳԵՎՈՐԳ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ախալքալաքի

Շվեյցարացի ֆինանսիստները ուկրաինական գրիվման ճանաչել են աշխարհի ամենագեղեցիկ արժույթը: Այսպիսի որոշում է կայացվել միջազգային ֆինանսական բանկի էսթետիկայի հարցերով հանձնաժողովի ամենամյա նիստի ժամանակ:

այն ամենագեղեցիկ, այլ՝ ամենադիմացկուն արժույթը: Շվեյցարացի ֆինանսիստների որոշմամբ՝ ամենագեղեցիկ արժույթների հնգյակում են հայտնվել նաեւ ավստրալական դոլարը, եվրոն, բուլղարական լեվը եւ ամերիկյան դոլարը:

Ուկրաինական թղթադրամի մոտ շրջապատում է գրաֆիկական նկարիչ Վասիլի Լոպատան: 12-րդ դարում գրիվմա է կոչվել նաեւ ռուսական փողը:

ՄԱՄԵՆԱԳԻՏԱՆԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԱՄԱՌԱՅԻՆ ՀՈԳԻՅ

Ամառն ընթացքում շոգին դիմակայելու առաջին կանոնը օրական մոտ 3 լիտր ջուր օգտագործելն է:

Պետք է օգտագործել առանց գազի սովորական ջուր՝ ծնունդի մինչեւ 2 լիտր, իսկ ամառը մինչեւ 3 լիտր, ընդամենը ամառը խորհուրդ չի տրվում օգտագործել շաքար եւ կոֆեին պարունակող նյութեր, քանզի կոֆեինը ժամանակավորապես թարմացնում է, բայց խթանում է օրգանիզմի հնարավորությունները եւ հանգեցնում ավելի շուտ հոգնելուն: Միտոսանոթային կամ երկկամային խնդիրներ ունեցողները պետք է օգտագործվող ջրի քանակը քննարկեն իրենց բուժող բժիշկի հետ:



Առողջական տարբեր խնդիրներ ունեցող մարդկանց շոգ եղանակին առավել ուշադիր պետք է լինել դեղորայքի ճիշտ ժամանակին ընդունելուն, իսկ հոյի կանանց եւ երեխաներին խորհուրդ է տրվում ցերեկային ժամերին պառկել, ինչը դրական ազդեցություն է թողնում սիրտանոթային համակարգի աշխատանքի վրա:

Նախընտրելի է, որ մարդիկ այնպես կազմակերպեն իրենց օրակարգը, որ օրվա շոգ ժամերին, 12:00-ից մինչեւ 19:00-ն, չգտնվեն արեւի ուղիղ ճառագայթների տակ: Ուկրաինական ճառագայթների մեծ չափաբաժինը կարող է հանգեցնել աչքերի, մաշկի հետ կապված բազմաթիվ խնդիրների: Պետք է պաշտպանվել արեւի ուղիղ ճառագայթներից, կրել արեւային որակյալ ակնոց: Նա-

Բնակչությանը խորհուրդ է տրվում նաեւ չչարաշահել թեյերի օգտագործումը, խոսակցել դժվարամարս սննդից, ավելի շատ ուտել միրգ եւ բանջարեղեն:

Ինչ վերաբերում է ծովափնյա հանգստին, ապա պետք է հիշել, որ արեւային շարաշահումը կարող է նպաստել մաշկի քաղցկեղի առաջացմանը, հետեւաբար անհրաժեշտ է արեւայրուքն ընդունել չափավոր:

ԱՄԵՆ ԻՆՉ ԲԱՐՈՂ Է

Մարդն իր կյանքի ընթացքում անխուսափելիորեն բախվում է խնդիրների: Շատերն իրենց հանգիստ են դրսևորում մասն իրավիճակներում եւ կարողանում են հեշտությամբ հաղթահարել դրանք, իսկ շատերն էլ խուճապի են մատնվում ու չեն կարողանում լուծումը գտնել մույնիսկ ամենապարզ խնդրի: Նրանց ամեն ինչ՝ սկսած պլաններից, վերջացրած պարզ առօրյա գործերով, քվում է շատ դժվար, անհնարին եւ անլուծելի:

ՆԱՄԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻՑ

Ինձ համար ապրելը միշտ էլ դժվար է եղել: Մանկության տարիներին վախենում էի բակի իջնել եւ խաղալ իմ ընկերների հետ, քանի որ մտածում էի, թե դրանից ոչ մի լավ բան դուրս չի գա: Անցման տարիքում իմ ամեն մանրուքով չափազանց մտահոգվելու, դժվարությունների ժամանակ խուճապի մատնվելու եւ իրավիճակին լուծում չտալու հատկություններն ավելի սրվեցին: Այսօր արդեն հասուն կին եմ, սակայն իմ բնավորության այս դրսևորումները չեն կարողանում վերահսկել: Ես գիտակցում եմ, որ իմ չափազանց մտահոգվելն ինձ շատ է խանգարում, սակայն ոչինչ չեմ կարողանում անել: Ինձ քվում է, որ իմ ամեն խնդիր իր հետեւից մոր խնդիրներ է քաշում-բերում:

Վորինս քիչ անորոշ եւ բարդ իրավիճակների:

ԼԻՆԵԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Չոգեվերլուծողները մասն վարքը պայմանավորում են կատարելության հասնելու ձգտումով, որը



չափազանց խիստ դաստիարակության հետեւանք է: Երբ ծնողները չափից դուրս պահանջկոտ են, երեխան գալիս է այն հանդման, որ ծնողներն իրեն սիրում են այն ժամանակ, երբ ինքը կատարյալ է, իղեալակամ: Մեծանալով՝ նա սկսում է ապրել այդպես, ինչպես մանկության տարիներին, քանի որ կատարելությունը նրա համար նշանակում է հսկողության տակ պահել սեփական անձը եւ միջավայրը:

«Թեթեւ տար»՝ հավանաբար բոլորս էլ բազմիցս լսել ենք այս գամ բաժանվելու հետ: Նորածին երեխան բավական երկար ժամանակ ինքն իրեն մոր հետ իբրեւ մեկ միասնություն է ընկալում, եւ մայրիկից մույնիսկ ամենակարճ բաժանումը կարող է տրավմայի առիթ հանդիսանալ: Երբ բաժանման արդյունքում առաջացած թախիծը մայրիկին տեսնելիս չի փոխվում երջանկության զգացողության հետ, ապա այդ տագնապը կարող է մարդուն հետապնդել ամբողջ կյանքի ընթացքում:

խոսքերը եւ հատկապես այն մարդիկ, որոնք ամեն ինչ բարդացնում են: Բայց այս խոսքերից մարդը չի թեթեւանում, այլ ընդհակառակը՝ նրանք ամենից շատ վախենում են թեթեւանալուց եւ ամեն ինչ ինքնահոսի թողնելուց:

ԲԱԺԱՆԱՆ ՎԱՆ

Ամեն ինչ բարդացնելու միտումը վկայում է նաեւ երեւոյթն ավարտին հասցնելու վախի մասին: Այսինքն՝ այդ մարդկանց համար ցանկացած աշխատանքի կամ հարաբերության ավարտ կապված է միայնության, դատարկության, երեքմն էլ մահվան վախի հետ: Կյանքը փլիխոփայորեն դիտարկելու փոխարեն նրանք ավելի շատ կենտրոնանում են, անհանգստանում են մանրուքների համար, փնտրում են թերություններ սեփական աշխատանքի մեջ եւ անում են ամեն ինչ, որ հնարավորինս ձգձգեն բաժանման պահը: Չոգեվերլուծողները այս ամենը կապում են մանկության տարիքում մայրիկից առաջին ան-

21-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՄԻՆ ՏԱՊԸ ԿԿԼԱՆԻ ԳՐԵԹԵ ՈՐԶ ՃԱՄԱՔԸ



միջոցառումներ չձեռնարկելու դեպքում դարի կեսերին ամոճալ տապը կկլամի ցամաքի մոտ 80-85 տոկոսը: Այս մասին է գրում Pravda.ru-ն:

Վերջերս Environmental Research Letters ամսագրում լույս տեսած հոդվածում ասվում էր, որ մթնոլորտում ջերմային գազերի արտանետումների ծավալի աճի դեմ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու դեպքում դարի կեսերին ամոճալ տապը կկլամի ցամաքի մոտ 80-85 տոկոսը: Այս մասին է գրում Pravda.ru-ն:

Կլիմայի փոփոխման հետեւանքների հետագոտման Պոտտոնային ինստիտուտի եւ Մադրիդում Կոմպլուտենսեյի համալսարանի մասնագետների հաշվարկով, տապի ալիքները, որոնք բոլորովին վերջերս նկատվել են Ռուսաստանում, Ավստրալիայում եւ Ամերիկայում, շուտով սովորական երեւոյթ կդառնան:

Նշենք, որ գիտնականների խոսքերով, կլիմայի գլոբալ փոփոխությունը արդեն իսկ հանգեցրել է տարվա մեջ տաք ամիսների հնգապի աճի:

*** Աղջիկը.**
- Ես վերջապես հանձնեցի վարորդական իրավունքի բոլոր քննությունները: Ցանկանում եմ մեքենա գնել: Գուցե խորհուրդ կտաս, թե որն է աղջկա համար ամենալավ մեքենան:

Տղան.
- Լվացի:

*** Ամուսինը, կասկածելով կնոջը անհավատարմության մեջ, վարձել էր մասնավոր խուզարկողի, որպեսզի հետեւի կնոջը: Խուզարկում գեթեմա գնել: Գուցե խորհուրդ կտաս, թե որն է աղջկա համար ամենալավ մեքենան:**

- Քաղաքային իրապարակում 2եր կինը հանդիպեց մի տղամարդու հետ, նրանք նստեցին ավտոմեքենա եւ գնացին մերձքաղաքային ամառանոց: Մտան տուն, նստեցին սեղանի շուրջ, գինի խմեցին,

2 Û ° 1 à 1 Û ° Ծ

հանվեցին, անկողին մտան եւ հանգրեցին լույսը: Ես այլեւս ոչինչ չտեսա: Ամուսինը.
- Նորից այս անիծյալ անհայտությունը...
* - Նկարագրեք 2եգ երեք բառով:
- Ալարկոս:
* - Ինչպե՞ս կարելի է ավելի լավ ավարտել վեճը կնոջ հետ:

- 2եւացիր մեռած:
* Որդին հարցնում է հորը.
- Դայրիկ, դու հիշո՞ւմ ես, թե ինչպիսի օր էր, երբ հանդիպեցիր մեր մայրիկին:
- Անհաջող, տղա՛ս:
* Երեկվա ֆուտբոլային համադրման ժամանակ գոլը խփեց եզրային մրցավարը: Սիւս թե ինչ է պատահում, երբ նախատեսվածից շատ են կաշառում:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Դայրենիքից դուրս ամեն տեղ աշխարհի ծայրն է:

Դայկական ժողովրդական ասացվածք
Վա՛յ աշխարհին եւ բոլոր կենվորներին աշխարհի, ովքեր մարմին են տալիս ստին եւ չարին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՎԱԿՆԱՎԱՅԵ (1786-1846)
Վրաց բանաստեղծ

Աշխարհում ընտանեկան օջախից քաղցր ոչինչ չկա:

ՑԻՑԵՐՈՆ (մ.թ.ա. 106-43)
Դոմեանցի հռետոր
Եթե հակառակ կարծիքներ չեն արտահայտվել, ապա էլ ինչից ընտրել լավագույնը:

ԴԵՐՈՂՈՏՈՍ (մ.թ.ա. 485-425)

Դույն պատմիչ
Գիտե՞ք, ինչպես է կոչվում կինը, որը միշտ գիտի, թե որտեղ է գտնվում իր ամուսինը: Իհարկե, այրի:

Դ.ԱՅԱԲԵԿՅԱՆ «Կրաստանի» ընթերցող



ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ 23-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ

23 տարի առաջ՝ օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունել է «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվել է Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը:

Հռչակագրի ընդունումից անմիջապես հետո՝ օգոստոսի 24-ին, հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի վրա, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշել է Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդը:

Հայաստանի Հանրապետության անկախության մասին հռչակագիրը բաղկացած է 12 կետից: Հռչակագրի ընդունումից հանրապետությունը հիմնվեց անկախ Հայաստան Հանրապետության Երրորդ Հանրապետի ունեցած անկախության

տուրքային անկախության մասին հռչակագիրը բաղկացած է 12 կետից: Հռչակագրի ընդունումից հանրապետությունը հիմնվեց անկախ Հայաստան Հանրապետության Երրորդ Հանրապետի ունեցած անկախության



Հռչակագրի ընդունումից հանրապետությունը հիմնվեց անկախ Հայաստան Հանրապետության Երրորդ Հանրապետի ունեցած անկախության

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանի գյուղատնտեսության նախարարությունն աշնանացանի իրականացման համար Հայաստան կենրերի 180 տոննա էլիտար եւ 3400 տոննա առաջին վերարտադրության ցորենի սերմացու:

տակն է խթանել գյուղատնտեսության զարգացումը եւ մշակելի հողատարածքների զգալի ավելացմանը:

Հայաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը՝ իր հերթին տեղեկացրեց, որ կառավարությունը շարունակելու է նաեւ դիվալտելիքի տրամադրման ծրագիրը: Առաջիկայում մի քանի հարցեր կիստակցվեն մարզպետերի հետ եւ աշնանացանի համար դիվալտելիք եւս կտրամադրվի:



Հայաստանի կառավարությունը հաստատեց աշնանացան ցորենի բաշխացուցակը՝ ըստ մարզերի համայնքների հայտերի: Միաժամանակ, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է առաջիկայում Հայաստան ներկրել 8 հազար 494 տոննա ազոտական պարարտանյութ: «Այն գյուղացիներին կտրամադրվի շուկայականից ցածր գնով՝ մեկ պարկը 6 հազար դրամով»,- ասաց նախարարը: Նրա խոսքերով՝ նման ծրագրերի նպատակն է խթանել գյուղատնտեսության զարգացումը եւ մշակելի հողատարածքների զգալի ավելացմանը:

Հայաստանի կառավարությունը հաստատեց աշնանացան ցորենի բաշխացուցակը՝ ըստ մարզերի համայնքների հայտերի: Միաժամանակ, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է առաջիկայում Հայաստան ներկրել 8 հազար 494 տոննա ազոտական պարարտանյութ: «Այն գյուղացիներին կտրամադրվի շուկայականից ցածր գնով՝ մեկ պարկը 6 հազար դրամով»,- ասաց նախարարը: Նրա խոսքերով՝ նման ծրագրերի նպատակն է խթանել գյուղատնտեսության զարգացումը եւ մշակելի հողատարածքների զգալի ավելացմանը:

ԿԱՅԱՑԱԿ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 17-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Ծաղկածորում մասնակցել է օգոստոսի 12-ին մեկնարկած «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքի փակման հանդիսավոր արարողությանը:



Մակցել է նաեւ «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքի փակման առիթով կազմակերպված տոնական համերգին:

Երկրի ղեկավարին ներկայացվել են «Բազե-2013» հավաքի անցած օրերին տեղի ունեցած միջոցառումները, նա ներկա է գտնվել միջոցառման շրջանակներում կազմակերպված սպորտային մի շարք մրցումների եզրափակիչ փուլերին, զրուցել հավաքի մասնակիցների հետ, հետաքրքրվել այս օրերի ընթացքում նրանց ստացած տպավորություններով, ինչպես նաեւ պատասխանել երիտասարդներին հետաքրքրող հարցերին:

Հայաստանի նախագահին ուղղված բազմաթիվ հարցերի շրջանակներում երիտասարդներին հետաքրքրել են քաղաքական, տնտեսական, կրթության, մշակույթի եւ այլ ոլորտներին վերաբերող կարեւոր եւ արդիական մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է նաեւ «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքի փակման առիթով կազմակերպված տոնական համերգին:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է 13,3 ՏՈԿՈՍՈՎ

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2013թ. հուլիսին Հայաստանի արտաքին առևտրի շրջանառության տարեկան ցուցանիշը կազմել է 492,6 մլն դոլար (202,2 մլրդ դրամ)՝ 2012թ. նույն շրջանի համեմատ ավելանալով 13,3 տոկոսով:

2012-ի նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 368,1 մլն դոլար (151,1 մլրդ դրամ)՝ աճելով 15,8 տոկոսով, իսկ ամսական կտրվածքով աճը կազմել է 8,6 տոկոս: Իսկ 2013-ի հունվար-հուլիսին, 2012-ի նույն ժամանակահատվածի համեմատ, ներկրումը կազմել է 2 364,5 մլն դոլար (973,5 մլրդ դրամ)՝ աճելով 1,4 տոկոսով:

Ընդ որում, ամսական կտրվածքով այս ցուցանիշն աճել է 3,1 տոկոսով: Իսկ 2013-ի հունվար-հուլիսին, 2012-ի նույն ժամանակահատվածի համեմատ, արտահանման աճը կազմել էր 3,4 տոկոս՝ 3 189,9 մլն դոլար (1 313,4 մլրդ դրամ):

հատվածի համեմատ, արտահանման ծավալը կազմել է 124,5 մլն դոլար (51,1 մլրդ դրամ)՝ աճելով 5,7 տոկոսով: Ընդ որում, ամսվա կտրվածքով այն նվազել է 10,2 տոկոսով: Իսկ 2013թ. հունվար-հուլիսին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, արտահանումը կազմել է 825,4 մլն դոլար (339,9 մլրդ դրամ), աճը՝ 9,9 տոկոս:

Ներկրման ծավալը 2013թ. հուլիսին, Արտաքին առևտրի բացասական սալդոն 2013թ. հունվար-հուլիսին, 2012-ի նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 1 539,1 մլն դոլար կամ 633,6 մլրդ դրամ:

Ինչպես հայտնում է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, 2013թ. հուլիսին, 2012-ի նույն ժամանակահատվածի համեմատ, արտահանման աճը կազմել էր 3,4 տոկոս՝ 3 189,9 մլն դոլար (1 313,4 մլրդ դրամ):

ՊԱՐԳԵՎՆԵՐ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Ծաղկածորում Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության, կրթության ազգային ինստիտուտի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համագործակցությամբ, օգոստոսի 9-15-ին կայացավ համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադան, որին մասնակցեց ընդհանուր առմամբ 150 աշակերտ 7-ից, ԼՂՀ-ից եւ Սփյուռքի հայկական կրթօջախներից:

նաեւ մասնակիցների ուխտագնացություններ սրբատեղիներ եւ այցելություններ ՀՀ տեսարժան վայրեր, որ իրականացավ ԵՅ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի աջակցությամբ: Համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադայի եւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի մրցույթի արդյունքներն ամփոփվեցին օգոստոսի 14-ին՝ մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառման ընթացքում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, այս տարի առաջին անգամ օլիմպիադայի շրջանակներում, կազմակերպվեց նաեւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի մրցույթ, որին մասնակցեց 54 աշակերտ:

Առարկայական օլիմպիադաներին մասնակցելուն զուգահեռ, օրակարգում նախատեսված էին ազգային պարի ուսուցում, դասախոսություններ պատմամշակութային թեմաներով, ինչպես

նաեւ մասնակցների ուխտագնացություններ սրբատեղիներ եւ այցելություններ ՀՀ տեսարժան վայրեր, որ իրականացավ ԵՅ Հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի աջակցությամբ: Համահայկական հայագիտական 6-րդ օլիմպիադայի եւ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի մրցույթի արդյունքներն ամփոփվեցին օգոստոսի 14-ին՝ մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառման ընթացքում:

ԳՈՐԾԱՐԿՎԵՑԻՆ ՆՈՐ ԱՐԱԳԱԶԱՓԵՐ



Երեւան քաղաքում եւ միջպետական նշանակության ավտոճանապարհներին երթելու կարողությունը վերահսկողության եւ իրավախախտումների արձանագրման արագաչափ սարքերի տեղադրման աշխատանքները շարունակվում են:

ավտոճանապարհի 65.5-րդ կմ (Քուչակ գյուղի վարչական տարածք)՝ 1 արագաչափ՝ երկու ուղղություններով, որտեղ երթելու կարողությունը համար թույլատրելի առավելագույն արագությունը 60 կմ/ժ է, վայրերում նոր տեղադրված երթելու կարողության արագության նկատմամբ վերահսկողության արագաչափ սարքերը:

Երեւան քաղաքի Չարենցի փողոց 8 1

արագաչափ, որտեղ երթելու կարողությունը համար թույլատրելի առավելագույն արագությունը 60 կմ/ժ է, երեւան քաղաքի Չարենցի փողոց 25 1 արագաչափ, որտեղ երթելու կարողությունը համար թույլատրելի առավելագույն արագությունը 60 կմ/ժ է, «Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման» միջպետական նշանակության

ԱՆՎՃԱՐ ՂԱՍՏԱԳՐԵՐ՝ ԿՐՏՆԵՐ ԳՊՐՈՅԻ ԱՆՎԵՐՏՆԵՐԻՆ

Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը հրաման է ստորագրել «2013-2014 ուսումնական տարվա հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերի համար ներդրումային գումարների չափը սահմանելու մասին»: Ըստ հրամանի՝ 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Հասարակագիտություն» դասագրքերի համար ներդրված գումարները անհրաժեշտ է փոխանցել «Դասագրքերի դասավարդների իրացումից մուտքեր» պետական գանձապետական հաշվեհամարին: Հայաստանի ԿԳ նախարարի նշված հրամանի համաձայն՝ կրթութեւր դպրոցում բոլոր դասագրքերը աշակերտներին տրամադրվում են անվճար:

ՈՐԱՎՅԱԼ ՍԵՈՒՄԳ ԳՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի կառավարության հերթական նիստում կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը կառավարության քննարկմանը ներկայացրեց «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Նախատեսվում է «Կայուն դպրոցական սնունդ» փորձնական ծրագիրն իրականացնել 2014-2016թթ.: Ռազմավարության գլխավոր նպատակն է ստեղծել դպրոցական կայուն սնունդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովել Հայաստանի բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարածական դասարանների աշակերտներին սնունդը: Ծրագրի ռազմավարական նպատակն է՝ աստիճանաբար ընդլայնելով հանրակրթական դպրոցներում սնունդի կազմակերպման շրջանակները, հանրապետության ողջ տարածքում տարածված դասարանների բոլոր սովորողներին որակյալ սնունդով ապահովել: Կառավարությունը հավանություն տվեց ծրագրին:

ՑԱՆՅՐԻՆ ԿՍԻՍԵՆ ԵՎՍ 70 ՓՈՔՐ ՇԷՎԵՐ

Հայաստանում կառուցվում է 70 փոքր հիդրոէլեկտրակայան (ՓՀԷԿ): Դրանք կգան համալրելու Հայաստանում գործող 140 փոքր ՀԷԿ-երի շարքը: Այսօր գործող փոքր ՀԷԿ-երն արդարադրում են Հայաստանում սպառվող էլեկտրաէներգիայի 8 տոկոսը, իսկ մնացած 70-ի շինարարական աշխատանքների ավարտից հետո այդ թիվը կհասնի 10 տոկոսի, որը կկազմի մոտ 990 միլիոն կվժ/ժամ էներգիա:

ՀԷԿ-երի օգտագործման ժամանակ բնապահպանական խնդիրներ չեն առաջանում, եթե դրանց կառուցման աշխատանքներն իրականացնելիս սխալներ տեղի չունենան: Նախկինում կառուցված ՀԷԿ-երն էլ, որոնց օգտագործումը խնդիրներ է առաջացնում, անմիջապես վերազինվում եւ վերանորոգվում են: Կառուցման փուլում գտնվող փոքր ՀԷԿ-երի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2014թ.-ի սկզբին:

ՊԵՏԱԿ ԳԵՐԱԶԱՆՃՈՒՄ Ե ԱՆԵՍԱՎՈՐՅԱԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

Աճող գնաճը առաջ է անցնել ամսական միջին աշխատավարձի բարձրացումից, առավել է սթրեսի միջին չափից: Այսպես, սույն թվականի հունվար-հուլիս ամիսներին սպառողական գները բարձրացել են 4.7 տոկոսով, իսկ ամսական միջին աշխատավարձը՝ 3.2 տոկոսով: Սա յոթ ամսվա միջին արդյունքներով է: Հուլիսին այս հարաբերակցությունը հաշվեգրու ժամանակշրջանում վատագույնն էր համապատասխանաբար կազմելով 8.5 տոկոս եւ 3.8 տոկոս: Հիշեցնենք, որ ընթացող տարվա հուլիս ամսին կորուկ բարձրացան բնական գազի ու էլեկտրաէներգիայի սակագները: Վերջին ժամանակների ընդհանուր գնաճի ֆոնի վրա այս էներգակրիզների թանկացումը ստիպեց սահմանափակ բյուջեով ընդհանրներին էլ ավելի «տնտեսել» տարբեր ծառայությունների ու ապրանքների սպառման վրա:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԼՔ

Երեկ՝ օգոստոսի 23-ին լրացավ վրացահայ անվանի թարգմանիչ, բանաստեղծ, հայ-վրաց բարեկամության բազմակատակ նվիրյալ, իր շնորհակալ գործի ու երկու դրկից ժողովուրդների գրական առնչությունների սերտացման գործի Վարպետ, բազմաթիվ պարգևների ու մրցանակների դափնեկիր (Իվ.Մաչաբելու, Գ.Տարիձեի, Ֆ.Նանսենի, Ե.Չարենցի, Պատվո շքանշանակիր, Մովսես Խորենացի մեդալակիր...), գրական-մշակութային հասարակական գործիչ, Քուլչակի, Սայաթ-Նովայի, Պարույր Սեւակի ու մեր այլ մեծաց վրացերենի հմուտ թարգմանիչ Գիվի Շահնագարի ծննդյան 80-ամյակը:



Շնորհավորում ենք երախտավոր Մտավորականի՝ Գիվի ՇԱՀՆԱԳԱՐԻ հորեյանը, մաղթում նրան քաջառողջություն, ուժ, եռանդ, ստեղծագործական նորանոր սխրանքներ՝ ի շահ հայ ու վրաց գրականությունների, մեր ընթերցողների ու գրական ընտանիքների...

Ողջ լինեք ու միշտ այսպես երիտասարդ: «Վրաստան» թերթի աշխատակազմ

ՎՁԱՐ

ՃԱՆԱԴԱՐՅԱՅԻՆ ՊԱՏԱՋԱՐՈՒՄ ՏՈՒԺՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ



Թբիլիսի-Մառ մեռլի ավտոճանապարհի 15 կմ հեռավորության վրա, Թելեթի գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ճՏՊ՝ բախվել են «Մերսեդես» մակնիշի 06 SO 044 եւ «Ձիպ» մակնիշի ZGN 105 պետհամարանիշերի ավտոմեքենաները:

«Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր Աննա Պողոսյանը տեղափոխվել է Թբիլիսի քաղաքի հիվանդանոց, իսկ Արամ Չախոյանը եւ Էդվարդ Սարգսյանը Գարդաբանի շրջկենտրոնի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է: Վրաստանում վթարի ենթարկված հայ քաղաքացիներին «Շտապօգնության» մեքենայով օգոստոսի 22-ին տեղափոխեցին Երեւան:

«ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ԱԼԻՔ - 2013»

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ 6-ՐԴՆ ԵՐ, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՆԸ՝ 8-ՐԴԸ

Օգոստոսի 18-20-ը, Արտեկում անցկացվեց «Մանկական նոր ալիք-2013» փառատոն մրցույթը:

Մրցույթի ընթացքում ելույթ ունեցան 16 մասնակիցներ Վրաստանից, Հայաստանից, Ռուսաստանից, Լատվիայից, Ղազախստանից, Ուկրաինայից, Ադրբեջանից, Լիտվայից, Ուզբեկստանից, Իսրայելից, Բելոռուսից: Մրցույթի հաղթող է ճանաչվել Ուկրաինայի ներկայացուցիչ 12-ամյա Մոֆյա Տարասովան: Նա մրցութային երկու փուլերի արդյունքներով հավաքել է 197 միավոր: Վրաստանի ներկայացուցիչ Իրակլի Ինժկիրվին 191 միավորով զբաղեցրեց 6-րդ տեղը, իսկ «Մանկական Նոր ալիք-2013» մրցույթում Հայաստանը ներկայացնող 9-ամյա Էլինա Չոլախյանը հավաքելով 186 միավոր՝ զբաղեցրեց 8-րդ հորիզոնականը:



Էլինա Չոլախյանը հավաքելով 186 միավոր՝ զբաղեցրեց 8-րդ հորիզոնականը:

ՄՊՈՐՏ

ՄԻՋԱՉԱՅԻՆ ՄՈՏՈՓՈՒՍԱՆՈՒ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում օգոստոսի 23-ին մեկնարկեց միջազգային մոտոփառատոնը: Մինչեւ օգոստոսի 25-ը անցկացվող փառատոնին մասնակցում են մոտո-տուրիստներ աշխարհի 38 երկրներից: Փառատոնն անցկացվում է Վրաստանի մոտոպարտի ֆեդերացիայի, ինչպես նաեւ համերապետության Sharariders ընկերության օժանդակությամբ, «Նովոստի Գրուզիային» հաղորդել են այդ ընկերությունում, որի հիմնադիրն է «Սուխիշվիլեթի» ազգային բալետի գլխավոր պարուսույց եւ հայտնի բայթեր Իլիկո Սուխիշվիլին:



Փառատոնին մասնակցելու համար Վրաստան բայթերներ են ժամանել հարեւան երկրներից՝ Ռուսաստանից, Թուրքիայից, Հայաստանից եւ Ադրբեջանից, ԱՊՀ-ի երկրներից, մասնավորապես, Ուկրաինայից եւ Բելոռուսից, Եվրոպայի երկրներից, մասնավորապես, Գերմանիայից, Նորվեգիայից, Բելգիայից, Լեհաստանից, Բուլղարիայից, Բալթիկայի եւ այլ երկրներից:

Փառատոնի շրջանակներում, որը կանցկացվի Ռուսթավի քաղաքի Rustavi International MotoPark ավտոարշավարանի տարածքում, տեղի կունենան տարբեր մարզական մրցումներ, զվարճալի մրցույթներ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԵՐ ԷՔՍՐԵՄԱԼ ՄԱՐԶԱՉԵՎՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 17-18-ը Աջարիայում տեղի է ունեցել «Batumi Extreme Fest» էքստրեմալ սպորտաձեւերի մրցույթ փառատոնը: Մրցույթ փառատոնը արդեն 3-րդ անգամ է կազմակերպվում եւ կարծես թե դառնում է ամենամյա: Մրցույթին մասնակցում էին մարզիկներ Վրաստանից, Հայաստանից եւ Թուրքիայից: Մրցույթն անցնում էր երեք դասով՝ ստանդարտ, ձեւափոխված (modification) եւ պրոֆե-

սիոնալ ձեւափոխված (promodification):

Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիան, Ադրեմալի Էքստրեմալ սպորտաձեւերի ֆեդերացիան՝ «Ֆլեյթ-Թեգետա Մոտորս» եւ «Նակոյլ» ընկերությունների աջակցությամբ ներկայացնում էին երկու մասնակից Հայաստանից: Նրանցից Արտաշես Ստեփանյանը՝ իր Jeep Wrangler մեքենայով մրցում էր պրոֆեսիոնալ ձեւափոխված դասում, իսկ Արթուր Թեւանյանը՝ Lada Niva մեքենայով ստանդարտ դասում:

Ստանդարտ դասում ներկայացված էր 19 մասնակից, ձեւափոխված դասում՝ 15, պրոֆեսիոնալ ձեւափոխված դասում՝ 14:

Երկար պայքարից հետո՝ Արտաշես Ստեփանյան, Գարի Գասպարյան թիմը պրոֆեսիոնալ ձեւափոխված դասում գրավեց 1-ին հորիզոնականը, իսկ Արթուր Թեւանյանը ստանդարտ դասում գրավեց 3-րդ հորիզոնականը:

Նշենք, որ սա Հայաստանի երկրորդ հաղթանակն է Իրանում գրանցած հաղթանակից հետո:

Օգոստոսի 24-ից 25-ը Թուրքիայում տեղի է ունենալու նմանատիպ մրցույթը:

ՌԵԳԻ. ՎԱՐԿԱՆԻՆ ԸՍՏ ԽԱՐԻ ՈՐԱԿԻ

Ռեգբիի միջազգային ֆեդերացիան հրապարակել է ազգային հավաքականների հերթական վրկամիշային սանդղակը: Սանդղակում Վրաստանի հավաքականը զբաղեցրել է 17-րդ տեղը, իսկ Հայաստանի ընտրանին՝ 48-րդը, իսկ Թուրքիան եւ Ադրբեջանը այս ցուցակում բացակայում են:

Միջազգային ռեգբիի վարկամիշային ցուցակը շարունակում են գլխավորել Նոր Զելանդիայի մարզիկները: 2-րդ տեղում են Ավստրալիայի, 3-րդում՝ Հարավային Աֆրիկայի Հանրապետության ռեգբիստները:

Սանդղակում ընդգրկված են 75 հավաքականներ:

Table with 10 columns and 10 rows containing numbers 1 through 60 in a grid pattern.

Large advertisement for 'VRASTAN' magazine, featuring the title 'Խ Ա Չ Բ Ա Ն Ռ' and a list of subscription rates for various regions and countries.

Advertisement for 'VRASTAN' magazine, contact information: Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Advertisement for 'VRASTAN' magazine, contact information: Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Դեռ. 2990-739, 2990-774

Advertisement for 'VRASTAN' magazine, contact information: Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

Advertisement for 'VRASTAN' magazine, contact information: «VRASTAN» Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445